

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ ԵՎ ԳԱՐՍԻԱ ԼՈՐԿԱ. ԳՐԱԿԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱՐԵՎ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Բանալի բառեր - Պատկերակառուցում, գրական ուղղություն, իրապաշտական դրսևորումներ, գրական ոճ, ռիթմեր, տաղաչափություն, արտահայտչական միջոցներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածում մեր նպատակն է անդրադառնալ Ե. Չարենցի և Գ. Լորկայի գրական փոխառնչություններին: Համեմատական ուսումնասիրության արդյունքում նկատել ենք, որ Ե. Չարենցին և Գ. Լորկային մերձեցնում է նախ և առաջ իրապաշտությունը, ինչը նրանց ստեղծագործություններում ուրվագծվել է յուրովի: Փորձել ենք անդրադառնալ դրանց առանձնահատկությունների վերլուծությանն ու գնահատել նրանց ստեղծագործությունների գաղափարական-գեղագիտական մի շարք կողմերը:

ԻՐԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ե. ՉԱՐԵՆՑԻ ԵՎ Գ. ԼՈՐԿԱՅԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Իրապաշտության ներկայացուցիչների գործերում հաճախ էր պատկերվում դրսի աշխարհի և քնարական հերոսի հոգեվիճակի ներքին հակամարտությունը: Նրանց գրական երկերին բնորոշ էր պատկերատաճողությունը, տաղաչափական նոր դրսևորումները, գունային սիմվոլների գործածությունը: Ե. Չարենցի պոեզիայում «Ճշմարտության որոնման ցավագին դրաման ապրած բանաստեղծը, որ կարող էր ոտքից գլուխ տրվել հուսալքման, ոչ միայն դիմադրում է կապույտի պատրանքին, այլև նույն կապույտ անուրջների կողքին և դրանց հետ միասին հակվում է դեպի իրականության հետ մերձեցում ստեղծելու ուղիները: Բանաստեղծը որոնում է իրականության ամենաաննշան դրվագը, նրա վերջին ակնթարթն ու ամենաչնչին բեկորը՝ վերադառնալու կյանք, վառվելու նրա հմայքներով»¹.

Կապույտում անսուտ խոսքեր են հոսում
երկնքից – երկինք:

¹ Աղաբաբյան Ս., Եղիշե Չարենց, Գիրք առաջին, Ե., ԳԱ հրատ., 1973, էջ 80:

հոգիս – Կապույտի լաբիրինթոսում
սրբացած կնիք:
այն, որ չի եղել, որ պե՛տք է լինի
մանկական սրտում –
հոսում է, որպես լուսավոր գինի –
հոգու կապույտում¹:

Գունային սիմվոլներով արարելու իրապաշտական պատկերակա-
ռուցումը բնորոշ էր նաև Գ. Լորկայի պոեզիային: Ըստ Վ. Միլյունասի.
«Երբեք այլևս բնության գոյությունը Լորկայի մոտ չի դրսևորվի այնպես
ցայտուն, ինչպես «Գնչուական ռոմանսներում»: Բնությունը լեցուն է այս-
տեղ ոչ միայն արտահայտչականությամբ, գույներով ու բույրերով – նա լե-
ցուն է արարմամբ, ներկայացնելով իրենից վիթխարի շնչավոր մի մար-
մին, ողջ ժամանակ գտնվելով անընդհատական վերածուլման մեջ»².
«Կապույտ ծաղկի մեջ է նա, // Բսաբել, // հազրեվարդի ծաղկի մեջ է // պահ-
վել» (Գ. Լորկա):

Գ. Լորկայի «Բանաստեղծը Նյու-Յորքում» ժողովածուն առանձնա-
նում է «իրապաշտական պատկերներով, որում արտացոլված է քաղաքա-
յին իրականության անկանոն ռիթմը»³ և նրա դրամատիքական անշուք
հասարակարգը: Իսպանական ժողովրդական բանահյուսության վաղն-
ջական մոտիվներն ու թեմաները Գ. Լորկայի բանաստեղծություններում
ձեռք են բերել արդիական գծեր և հիմք են հանդիսացել նորովի և խո-
րությամբ վերստեղծելու իրականությունը. «Ոչ ոք չի քնում այս երկնքի
տակ: Ոչ ոք, // ոչ մի մարդ: Ոչ ոք չի քնում: // Լուսնային գունատ ուրվա-
կաններն են // ման գալիս իրենց խրճիթների շուրջ...» (Գ. Լորկա):

Իսկ Ե. Չարենցի ստեղծագործությունները վկայում են ժամանա-
կաշրջանի երևույթների գեղարվեստական ընդհանրացման և արտա-
հայտչական նոր ձևերի ու հնարների որոնման մասին: Ե. Չարենցը՝ «Չա-
փական, հնչյունական և ընդհանրապես ձևական տարրերի նմանությամբ
հասնում է խոսքի հնչերանգային ընդգծվող արտաբերման: ...Ստեղծվում
է կեսգիշերային մղձավանջների ու անքնությունների վիճակներում գոյա-
ցող պատկերների, ձևերի հախուռն ու արագաշարժ ընթացք, որոնք նո-
րանոր տազնապներ են ծնում անորոշության ու անծայր գիշերվա սար-
սափների մեջ խարխափող մարդու մտապատկերում»⁴. «Ղոփո՛ւմ են, դո-
փո՛ւմ են, դոփո՛ւմ են ձիերը, // Մթի մեջ դոփում են, խփում են պայտերը, //

¹ Չարենց Ե., Լուսամփոփի պես աղջիկ, Ե., Վերնատուն մեդիա, 2022, էջ 37:

² Силонас В., Федерико Гарсиа Лорка. Драма поэта, М., Наука, 1989, с. 75.

³ Плавский З., Испанская литература XIX-XX веков, М., Высш. шк., 1982, с. 153.

⁴ Գաապարյան Դ., Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը, Ե., ԳԱ հրատ., 1979, էջ 75:

Պայտերը խփում են, խփում են հողին – // Անծայր է գիշերը, անհայտ է ուղին» (Ե. Չարենց):

Իրապաշտական ուրվագծերով է արտացոլված Ե. Չարենցի և Գ. Լորկայի ստեղծագործություններում «քաղաքի» նկարագրությունը, որի պոետիկայի բաղադրիչ տարրերն են «ռիթմերը», «հանգերը» և «պատկերային համաչափությունը»: Այսպես, քաղաքային միջավայրի նկարագրության համապատկերում՝ «Արևի, ջրի, ինչպես նաև ողջ բնության նեոմիֆոլոգիական ըմբռնումներով, Լորկան բախվում է այստեղ Ռուբեն Դարիոյի հետ: «Աշխարհի ամբողջականության գաղափարը՝ դեռևս փորձ են արել մարմնավորել նաև խորհրդապաշտները՝ հաճախակիորեն խոստովանելով, որ իրականության առավել լայն ընդգրկումները հատկանշական են ժողովրդական բանահյուսությանը...»¹. «Օ, քաղաք իմ գնչուական, // ո՞վ քեզ տեսնի ու չսիրի: // ծովից հեռու խուրձն ես փռել // չսանրված քո վարսերի» (Գ. Լորկա):

Ե. Չարենցի և Գ. Լորկայի ստեղծագործություններում արտացոլված հայրենիքի ողբերգության և նրա հանդեպ կարտոտի թեման արտահայտվել են գեղարվեստական խոսքի տարատեսակ սիմվոլներով, ժողովրդին ու գալիքին ուղղված կոչերով և ունեն արդիական հնչելություն: Մա վկայում է նրանց գաղափարական նմանությունների մասին: Արձագանքելով Իսպանիայում տեղի ունեցող քաղաքական դեպքերին, Ե. Չարենցն ստեղծագործական ուշ շրջանում գրեց բանաստեղծությունների մի շարք, որի «ձեռագիր տարբերակում Չարենցը Իսպանիայի նորագույն պատմությունը նմանեցնում է Բոսիսի «Դժոխքին»»². «Կրկի՛ն, կրկի՛ն, Իսպանիա, քո դաշտերի վրա // արյան անձրև, արճիճ է կաթում – // և հին քաղաքներիդ փողոցներում ահա // խարույկներ են կրկին ճարճատում...» (Ե. Չարենց):

Գեղագիտության արծարծման խնդիրը կարևորագույններից էր հանդիսանում մոդեռնիզմի գրականության պատմության մեջ: «Վիկտորիանական դարաշրջանում» գեղագիտությունը դառնում է աշխարհայացք՝ գրականության և արվեստի մեջ: Արվեստն, այդպիսով, կոչված էր դառնալու կյանքի արտացոլման միակ միջոցը: Անգլիական գեղագետները գտնում էին, որ նրա խզումը քաղաքական թեմաներից կհանգեցնի միայն ստեղծագործական լիակատար ազատությանը: Հետևելով նրանց հռչակած գաղափարներին՝ իր գեղագիտական տրակտատում («De profundis») Օսկար Ուայլդն ասում էր. «Ես վերաբերվում էի Արվեստին, որպես բարձրագույն իրականության, իսկ կյանքին՝ որպես հերյուրանքի

¹ Силлинос В., Федерико Гарсиа Лорка. Драма поэта, М., Наука, 1989, с. 50.

² Աղաբաբյան Ս., Եղիշե Չարենց, Գիրք երկրորդ, Ե., ԳՍ հրատ., 1977, էջ 199:

տարատեսակության. բոլոր փիլիսոփայական համակարգերը ես կարողացա ի մի բերել մեկ դարձվածում, և ողջ կյանքը՝ մեկ աֆորիզմում»¹:

Ռումանտիկական համանման հայացքներ մի որոշ ժամանակ անց զարգացրել է նաև Թ. Գյոթեն, որոնք ճանապարհ են ուղղորդում դեպի վեռլենյան «կալամբուրային բանաստեղծությունները», Ա. Ռեմբոյի ու Տ. Կորբիերի «ջղածգական պոեզիան», դեպի Լոտրեամոնի «հումորային պոեզիան»: Նշենք, որ Գ. Լորկան քաջատեղյակ էր ժողովրդական բանահյուսությանը, նրա հետաքրքրությունները հակված էին դեպի հին քաղաքների հուշարձաններն ու ճարտարապետությունը: Ազգային գնչուական երգերը հրապուրել են իսպանացի բանաստեղծին, երգեր, «որոնց երաժշտությունը ձուլվում էր իսպանական մեղեդիներին». «Օ, գիթառ, // սիրտս, որ հռչակում ես // հինգ դաշույնի տակ» (Գ. Լորկա):

Մետաֆորային տարատեսակ գուգորդումներով, աշուղական բառաստեղծման կանոնավոր հանկերգով՝ ««Տաղարանում» հեղինակը դիմում է բոլորովին նոր լեզվի, որը նրա պոետիկայում մնում է իբրև կղզի, իբրև հատուկ ոճավորում: Սայաթ-Նովան օգնում է Չարենցին դեպի արդիականություն տանող նրա ճանապարհին, տալով նրան արևելյան երգարվեստին բնորոշ ուժեղ զգայականություն, մեծ կիրք ու ջերմություն ունեցող լեզվամտածողություն, որից հետո բանաստեղծը թողնում է իր «ուսուցչին» և արդեն ինքնուրույն անցնում իր «ճանապարհը». Սայաթ-Նովան այլևս չի հայտնվում Չարենցի պոեզիայում»². «Գնաց նորից տխուր ու լուռ՝ սիրտը հազար մուրազ ու սեր. // երազն անցավ – դո՛ւ մնացիր, պատկերքը քո մնաց լուսե, // մեկ էլ իմ խեղճ սիրտը մնաց՝ Սայաթ-Նովի սազը ձեռին» (Ե. Չարենց):

Ռումանտիզմի ընդհանուր համապատկերում՝ «Ռումանտիկները արհամարհել էին ամեն ինչ կամ գրեթե այն ամենը, ինչը մտքից պահանջում է փոքր-ինչ դժվարածին ուշադրություն ու հետևողականություն: Նրանք որոնում էին ցնցող, հափշտակող ու իրարամերժ էֆեկտներ: Նրանց իսպառ չէին հուզում ո՛չ չափն ու կշռույթը, ո՛չ ճշգրտությունը, ո՛չ խորությունը»³: Իրապաշտության պոետիկայի համապատկերում՝ ««Ճանապարհին» հայտնվում են «հարյուր սև հեծյալներ», որոնց հագուստի գույնը չի խոստանում ոչ մի լավ բան, ինչպես գիթառի մարգարեական հնչյունները, որոնք շարքի բանաստեղծություններից մեկում՝ «Վեց աղեղ», ինչպես անողորմ մի սարդ, հյուսում են «ճակատագրի ձեռք բերած աստղը»: Շարքի հաջորդ բանաստեղծությունը՝ ծիսական պարն է Պետեներայի այգում, ինչն

¹ Эллман Р., Оскар Уайльд: Биография, М., Колибри, Азбука-Аттикус, 2012, с. 616.

² Էդոյան Հ., Եղիշե Չարենցի պոետիկան, Ե., Վան Արյան, 2011, էջ 245:

³ Վալերի Պ., Ոգու քաղաքականություն, Ե., Փրինթինգոն, 2005, էջ 270:

աստիճանաբար ճակատագրական շրջապատույտի մեջ է ներքաշում երկինքը, երկիրը և ամբողջ տիեզերքը»¹։ «Պար է գալիս Կարմենն այսօր // Սևիլիայի փողոցներում, // շիկագանգուր վարսեր ունի, // բիբեր-խոցող ու շողշողուն» (Գ. Լորկա)։ Բանաստեղծական կոմպոզիցիայի հատկանշությամբ Գ. Լորկայի տողերն այժմ զուգահեռ անցկացնենք Ե. Չարենցի բանաստեղծական տողերի միջև։

Ահա այսպես, «Արկածներով ու փորձանքներով լի ճանապարհորդությունից հետո անձանթը կղզում հայտնված և Նավզիկեով հմայված Ռդիսևսի թեման Չարենցի համար այն ոլորտն էր, ուր կարող էր բացել իր կենսագրությունը։ Նավզիկեն Չարենցի համար նույնն է, ինչ Լատուան Պետրարկայի, Գյոգալը՝ Սայաթ-Նովայի, Հրաշք աղջիկը՝ Վահան Տերյանի համար»²։ «...Խրախճանքի՝ ջահեր ցուցուլալու,- // և խնջույքի՝ շոյլ, և՛ բերկրության,- // և հոլանի՛, չքնա՛ դ՛ մարմինների // պարերգություն մերկոտն ու բամբիռնածափ...» (Ե. Չարենց)։

Ըստ Ռ. Ուելլեքի և Օ. Ուորրենի՝ «Դրայգերի որևէ վեպի և Պոյի «Զանգերի» նման բանաստեղծության տարբերությունը այս առումով կրում է զուտ քնարական բնույթ և հիմք չի տալիս բաժանելու գրական ստեղծագործությունը երկու հակադիր տեսակների՝ արձակի և բանաստեղծության։ Գեղարվեստական շատ երկերում, այդ թվում, անշուշտ, նաև արձակում հնչյունային շերտը ուշադրություն է գրավում և այդպիսով կազմում էսթետիկական ազդեցության բաղկացուցիչ մասը»³։ Իրապաշտության գեղագիտության մեջ նշված միտումներն առկա են նաև Պ. Վեռլենի հետևյալ տողերում, ինչը մերձեցնում է նրան Ե. Չարենցին և Գ. Լորկային. «Եվ կիթառների վրա դառնակոծ // ցնցվում են ազատ ձեռքերը նրանց, // և քրթմնջում են երգեր արտառոց, // երգեր ընդվզման և հայրենաբաղձ» (Պ. Վեռլեն)։

Ե. Չարենցի և Գ. Լորկայի ստեղծագործություններում արտացոլված է նաև աշնանային բնապատկերը, ինչը նույնպես արտահայտված է իրապաշտական պատկերակառուցման սկզբունքներով։ Գ. Լորկայի գրական-ստեղծագործությունը, իսկ մասնավորապես՝ «Գնչուական ռոմանսները», թափանցելով իսպանական ժողովրդական մշակույթի ակունքների մեջ, ամբողջանում է առօրյա կյանքի և իրականության համադրումով։ Աշնանային «խորհրդանիշներով» է գրել Գ. Լորկան իր բանաստեղծություններից մեկը.

Իմ սիրտը այնպես լավ է հասկանում
ուշ աշնան խոնավ ողբերգությունը,

¹ Силлинос В., Федерико Гарсиа Лорка. Драма поэта, М., Наука, 1989, с. 66.

² Աղաբաբյան Ս., Եղիշե Չարենց, Գիրք երկրորդ, Ե., ԳԱ հրատ., 1977, էջ 389:

³ Ուելլեք Ռ., Ուորրեն Օ., Գրականության տեսություն, Ե., Փրինթինգտոն, 2008, էջ 226:

որը շիթ առ շիթ՝ խամրած
ճյուղերից թափվում է ներքև¹:

Ե. Չարենցի «Էպիքական լուսաբաց» ժողովածուում, ինչպես դրան հաջորդած մի շարք ստեղծագործություններում, մեծ տեղ են զբաղեցնում բանարվեստի գաղափարական բովանդակության, նրա ժողովրդայնության, ժամանակաշրջանի գեղագիտության հիմնախնդիրները: Ե. Չարենցը հետևյալ բանաստեղծության մեջ կիրառել է առանձին հնչյունների տարաբնույթ կրկնություններ՝ ստեղծելով «շարժուն, ոճական խոսքի» զգայական պատրանք:

Ծառերից պատերի վրա
ստվեր է ընկել կապույտ.
կարոտդ կամար է կապում
իմ հոգու թանձր տապում...²:

Իրապաշտության ներկայացուցիչների համար, առաջնայինն իրականության մեջ տեղի ունեցող հակամարտությունների պատկերումն էր՝ «գերիրականության» և «երազատեսության» հակադրամիասնության եղանակով, ինչի արդյունքում հաճախ էր կիրառվում պամֆլետային ժանրը, ինչպես օրինակ՝ Է. Փաունդի պոեզիայում. «Ծառը մտել է ձեռքերիս մեջ, // բուսահյուրը բարձրանում է // իմ բազուկներով, ծառը կրծքիս // մեջ է աճել դեպի ներքև...» (թարգմ.՝ Ս. Մկրտչյանի):

«Աշնանային» բնապատկերների նկարագրությունն արտացոլված է նաև Ե. Չարենցի և Գ. Լորկայի այլ գործերում ևս: Այսպես, զուգահեռ անցկացնենք հետևյալ բանաստեղծական հատվածների միջև, որոնցում նկարագրված «աշնան քամին» ու «մեռած տերևները» դարձել են իրապաշտական պատկերակառուցման «էլեգիկ» սկզբնաղբյուրը, որտեղ, կարծեք, «չկան գույներ», այլ նման են «իմպրեսիոնիստական բնանկարների».

Մեռած տերևներն ինձ
ահ են բերում, ահը
դաշտերի ցողերով լցված³:
(Գ. Լորկա)

Բարձրացավ քամին...
տերևներն աշնան ահա
թռչում են դեպի մահը...⁴:
(Ե. Չարենց)

«Աշնանային» թախծալի պատկերներին անդրադարձ է կատարել նաև Գիյոմ Ապոլիները, որի ստեղծագործական մեթոդի ամենից բնորոշ գծերից են համարվում՝ անհատական սկիզբն ու «բացականչական» հնչերանգները, որոնք նրա պոեզիայում նկատելի լարվածության են հասնում.

¹ Լորկա Գ., Մեղրի երգը, թարգմ.՝ Հ. Սահյանի, Ե., Հայաստան, 1965, էջ 17:

² Չարենց Ե., Լուսամփոփի պես աղջիկ, Ե., Վերնատուն մեդիա, 2022, էջ 234:

³ Լորկա Գ., Երգերի գիրք, թարգմ.՝ Ֆ. Կիրակոսյանի, Ե., Իրավունք, 2007, էջ 12:

⁴ Չարենց Ե., Վերջին խոսք, կազմեց՝ Ա. Չարենց, Ե., Հայագիտակ, 2007, էջ 265:

գեղարվեստական խոսքը վերաճում է անհանգիստ մենախոսության. «Ես պոկեցի ցախի մի շիվ: // Հիշի՛ր, մեռավ աշունն իսպառ: // Երկրում էլ չենք տեսնի իրար...» (թարգմ.՝ Ա. Ալիքյան):

Այսպիսով, երկու բանաստեղծների՝ Ե. Չարենցի և Գ. Լորկայի գրական ժառանգության ամենօրյա ուսումնասիրությունն այսօր էլ չի կորցրել իր հմայքն ու հետաքրքրությունը արդի գրականագիտության պահանջների տեսանկյունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղաբաբյան Ս., Եղիշե Չարենց, Գիրք առաջին, Ե., ԳԱ հրատ., 1973:
2. Աղաբաբյան Ս., Եղիշե Չարենց, Գիրք երկրորդ, Ե., ԳԱ հրատ., 1977:
3. Գասպարյան Դ., Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը, Ե., ԳԱ հրատ., 1979:
4. Էդոյան Հ., Եղիշե Չարենցի պոետիկան, Ե., Վան Արյան, 2011:
5. Լորկա Գ., Երգերի գիրք, Ե., Իրավունք, 2007:
6. Լորկա Գ., Մեղրի երգը, Ե., Հայաստան, 1965:
7. Չարենց Ե., Լուսամփոփի պես աղջիկ, Ե., Վերնատուն մեդիա, 2022:
8. Չարենց Ե., Վերջին խոսք, Ե., Հայագիտակ, 2007:
9. Վալերի Պ., Ոգու քաղաքականություն, Ե., Փրինթինֆո, 2005:
10. Ուելլեք Ռ., Ուորրեն Օ., Գրականության տեսություն, Ե., Փրինթինֆո, 2008:
11. Плавский З., Испанская литература XIX-XX веков, М., Высш. шк., 1982.
12. Силюнас В., Федерико Гарсиа Лорка. Драма поэта, М., Наука, 1989.
13. Эллман Р., Оскар Уайльд: Биография, М., Колибри, Азбука-Аттикус, 2012.

Нарек Сукиасян, Егише Чаренц и Гарсиа Лорка: литературные взаимодействия - Вопрос о взаимодействии литературных взглядов Е. Чаренца и Г. Лорки и сегодня имеет важное значение. Исследование показало, что сближение их литературных взглядов было обусловлено особенностями поэтики сюрреализма. Сюрреалистическое построение изображения было характерной чертой творчества Е. Чаренца и Г. Лорки. В статье параллельно анализируются способы выражения цветовых символов в их

литературных произведениях, с одной стороны, и переплетение романтических и реалистических элементов, с другой. Символический осенний пейзаж находит свое отражение и в их работах. Особенно в сборнике «Эпическая зоря» Е. Чаренца, а также в ряде последующих произведений большое внимание уделялось проблемам идейного содержания народного творчества и эстетики того периода, а также использованию различных просодийных форм. Следует отметить, что в некоторых произведениях Е. Чаренца и Г. Лорки не обошлось без тематического изображения общественно-политической жизни. Благодаря всему этому мы посчитали изучение указанных вопросов важным и актуальным.

Narek Sukiasyan, Yegishe Charents and Garcia Lorca: literary interactions

- The issue of the interaction between the literary views of E. Charents and G. Lorca is of great importance even today. The study showed that the convergence of their literary views was due to the peculiarities of the poetics of surrealism. The surrealist construction of the image was a characteristic feature of the work of E. Charents and G. Lorca. The article simultaneously analyzes the ways of expressing color symbols in their literary works, on the one hand, and the interweaving of romantic and realistic elements, on the other. The symbolic autumn landscape is also reflected in their works. Especially in the collection "Epic Dawn" by E. Charents, as well as in a number of subsequent works, much attention was paid to the problems of the ideological content of folk art and aesthetics of that period, as well as the use of various prosody forms. It should be noted that some of the works of E. Charents and G. Lorca did not do without a thematic depiction of social and political life. Thanks to all this, we considered the study of these issues important and relevant.

Ուղարկվել է խմբագրություն 27.09.2022թ.

Գրախոսվել է 30.09.2022թ.

Ստորագրվել է տպագրության 01.10.2022թ.